

ԺԳ

ՅԱՂԱԳՍ ՓԱԿԱՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Առաջ.

Իգ իգ Թեամբ, Թէ՛ որպէս տէրն հրաման ետ, և պարզե-
ւեաց մեզ, Թէ՛ զոր արձակիցէք յերկրի, հղիցի ար-
ձակեալ յերկինս, նոյնպէս և հրաման տուեալ քա-
հանայութեան և երիցանց կարգի, զարժանիս օրհ-
նութեան՝ միաբան օրհնել, և զանարժանսն միա-
բան կապել և ըմբերանել, և զոր կապենն՝ կապեալ
կացցէ, մինչև հնազանդեսցի առաջնորդին: Ապա
եթէ՛ տարապարտուց և յանարժանս՝ զոք կապես-
ցեն, պատիժ սլատուհասի ընկալցին ըստ արժանի,
որք ի զուր կապեցին, բայց որ կապեցաւն՝ ընկալ-
ցի ակորթելով զկապանսն, որպէս Թէ՛ իցէ արժա-
նի կապանացն:

ԺԴ

ՅԱՂԱԳՍ ԱՆԱՐԺԱՆ ԳՈՐԾՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ ԱՌՀԱՍԱՐԱԿ

Առաջ.

Ի ձեռն
կղեմայ

Ժառանգաւոր ոք՝ երաշխաւորս տուեալ, լուծ.

Ժբ ծբ ցի:

Իե ծթ

Նախկողոս, կամ երեց, կամ սարկաւազ, Թէ
հարկանելով զհաւատացեալս մեղուցեալս, կամ զան-
հաւատս ապիրատս, այսպէս կամիցի երկեցուցանել,
լուծանել զնոսա հրամայեմք. քանզի ոչ ուրուք զայս
տէրն ուսոյց, այլ զնորին հակառակն՝ ինքն տան-
ջեցաւ, այլ ոչ զոք եհար, Թշնամանեցաւ, և ոչ զոք
փոխարէն Թշնամանեաց, չարչարեցաւ՝ և ոչ սպառ-
նացաւ:

Խ հդ

Նախկողոս, կամ երեց կամ սարկաւազ քուի
իցէ պարապեալ կամ գինարբուաց, կամ դադարես-
ցի, և կամ լուծցի:

Խս հե

Կէս սարկաւազաց կամ գրակարդացաց կամ
սաղմոսերդաց, զնմանս արարեալ, կամ դադարես-
ցին, կամ որոշեսցին, նմանապէս և ժողովրդականք:

Խզ ձ

Նախկողոս, կամ երեց կամ սարկաւազ, կամ
քնաւին իսկ ի քահանայական կարգէ, յամուսնու-
թենէ, ի մոտ և ի գինւոյ, ոչ վասն ճգնութեան,
այլ պիղծ վարկանելով զայնոսիկ ի բաց մեկնի՝ մո-
ռացեալ Թէ՛ ամենայն ինչ յոյժ բարի է, զի արու-

և էգ արար Աստուած զմարդն, այլ հայհոյելով անգոսնեսցէ զգործաւորութիւնն. կամ ուղղեսցի կամ լուծցի, և յեկեղեցւոյն ի բաց ընկեսցի, նմանապէս և ժողովրդական ոք:

Խը ձբ Եթէ ոք եպիսկոպոս, կամ երեց կամ սարկաւագ՝ յաւուրս տօնից՝ ոչ ճաշակէ ի մսոյ և ի գինւոյ, լուծցի, որպէս զհարեալ խղճի մտաց իւրոց, և պատճառք գայթակղութեան բազմաց եղեալ:

Խթ ձգ. Եթէ ոք ժառանգաւոր ի կապելուջ ըմբռնեսցի ուտելով, որոշեսցի. բայց ի պանդուկուջ միայն, և ի ճանապարհի յաղագս հարկ լինելոյ:

ծ ձդ Եթէ ոք ժառանգաւոր՝ թշնամանեսցէ զեպիսկոպոսն անիրաւաբար, լուծցի. քանզի զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյեսցես:

ծա ձե Եթէ ոք ժառանգաւոր՝ թշնամանեսցէ զերեց կամ զսարկաւագ, որոշեսցի:

ծբ ձզ Եթէ ոք ժառանգաւոր՝ զխուլ, կամ զկաղ, կամ զկոյր, կամ զղէման լինասեալ աշպանեսցէ, որոշեսցի. նմանապէս և ժողովրդականք:

ծէ զա Եթէ ոք ժառանգաւոր՝ վասն մարդկային երկիւղի՝ Հրէի կամ Հեթանոսի, կամ Թերահաւատի կորուսցի, և թէ զանունն Քրիստոսի ունի, լուծցի և որոշեսցի, իսկ եթէ՝ զանուն ժառանգաւորի՝ լուծցի:

կէ ճա Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական՝ առցէ ի սուրբ եկեղեցւոյ՝ մոմեղէն, կամ ձէթ, որոշեսցի. և հինգ պատիկ տուժեսցի. հանդերձ որով առնէ անոթով ոսկեղէնիւ սրբեցելով՝ մի՛ ոք յիւր պէտս զողացեալ, զի օրինազանցութիւն է, ապա թէ ոք ըմբռնեսցի՝ պատուհասիւ որոշեսցի:

Նիկեոյ Վասն այնոցիկ՝ որ առանց քննելոյ և փորձելոյ մերձեցան յերիցութիւն, և ապա իրքն յայտնեցան, և մարդն պիղծ գտաւ, և դարձեալ ի նոյն մեղս անկեալ շողախէր, և ընդդէմ կանոնաց գործէր, զայնպիսին ոչ ընդունի եկեղեցի, ոչ զնա, և ոչ զառնելիսն, կամ եղև սուրբ և մեծ ժողովոյն, զի այնպիսին լուեսցէ:

թ ճծզ Վասն այնոցիկ՝ իրք օծան յանաբժանից, ըստ անգիտութեան եպիսկոպոսին, կամ եթէ գիտէին՝ որք մերձեցուցին՝ և ի ձեռն արծաթոյ քարչեցաւ ճշմարտութիւնն, եթէ ի վերջոյ յայտ եկեսցեն իրքն,

և անարժանութիւն առնն, և կաշառակրծուութիւն կարգողացն, կամ եղև մեծ ժողովոյն՝ օծումն բարձրի ի նմանէ, և կարգողքն ընդ պատուհասիւք եղիցին, որպէս եպիսկոպոսն կամեսցի:

Ժբ ճծը

Վասն այնոցիկ՝ որք կոչեցանն, և յօժարութեամբ կալան զաստիճանն, և ապա ի մեղս զառածան, և կերան զփսխած իւրեանց, ի շնութիւն, ի պոռնկութիւն, ի գողութիւն, յազահութիւն, յոխակալութիւն, մտնաւանդ զանհնարին աղէտսն, որ գործեն և անդէն ի խորհուրդն և ի սուրբ սեղանն մերձենան, այսինքն ի պատարագն մատուցանել, և շարժեն զբարկութիւնն Աստուծոյ ի վերայ երկրի. կամ եղև մեծ ժողովոյն, վասն մարդասիրութեանն, այսպիսիքն Ժ. ամ, ընդ պատժովք լիցին, և Գ. ամ, ընդ ունկնդիրսն կացցեն, ապա քննեալ և փորձեալ զվարս և զջերմեւանդն՝ սրտիւ յօժարութեամբ, և ողորմութեամբ, և աղքատսիրութեամբ՝ զապաշխարութիւնն. կամ եղև սուրբ և մեծ ժողովոյն՝ առ այնպիսիսն մարդասիրութիւն ցուցանել եպիսկոպոսին՝ որ իցէ ի վիճակին անդրէն ի խորհուրդն հաւասարիլ և ի կարգ դաշտամանն, ապա եթէ՝ կեղծաւորութեամբ իցէ երթեկն նորա յեկեղեցի, և դիտել զնմանիսն իւր, և գայթ ի գայթ զղջումն և ապաշխարութիւնն մարդահաճութեամբ, այնպիսումն, կանոնք մինչև ցլախճան սահմանեսցին:

Եւկ. Բ.

Յթէ ոք արհամարհելով զեկեղեցեաւն, և զեծ մօզ կեղեցւոյ խորհուրդ՝ ի տան գործիցէ, նզովեալ եղիցի:

Գանդ.

Ոյք արտաքս քան զեկեղեցին, ժողովս ժողովսցեն, և արհամարհիցեն զեկեղեցի, և կամիցին զեկեղեցւոյ պէտս գործել, իբրև ոչ իցէ երեցն՝ ըստ կամաց եպիսկոպոսին լեալ, նզովեսցի:

Անտոք.

Երեց որ՝ կամ սարկաւագ, արհամարհեաց վիւրոյ եպիսկոպոսին զհրաման, իբրև մերժեալ էր զնոսա յեկեղեցւոյ, և առանձին ժողովեցան, կամ ժողովեսցին, և սեղան հաստատեցին, և ի կոչ եպիսկոպոսին ոչ եկին, և ընդդէմ եղեն, և անարգեցին, և ոչ կամեցան զբանս նորա յանձն առնուլ և լսել, իբրև միանգամ և երկիցս կոչեաց, զայնպիսիսն բնաւին մերժել արժան է, և ոչ ևս մխիթարութեան ինչ հասուցանել իբրև ոչ ևս կարող են զնոյն պատիւ ունիլ ամենեւին: Ապա եթէ յամեացին ևս ի

նմին իրս, խռովութիւնս առնել և ամբոյս յարուցանել յեկեղեցւոյ վերայ՝ յարտաքին իշխանութենէ, և ի գորութենէ ուստեք, զայնպիսիսն՝ իբրև զխռովարարս դարձուցանել և սանձաբեկ առնել արժան է:

Ժբ յհ Եթէ՝ ոք յիւրմէ հպիսկոպոսէն անկաւ՝ երեցկամ սարկաւագ, և և զեպիսկոպոսին զդատաստանն ոչ յանձին կալաւ, և համարձակեցաւ ձանձրացուցանել զլուր ժողովոց բազմաց, որպէս թէ զինչ իրաւունս ունիցի, առաջի բազում հպիսկոպոսաց ասիցէ, և ի նոցանէ զարդար դասաստանի վճիռն ակն ունիցի առնուլ: ապա եթէ՝ ի նոցանէ սրտեղեցաւ, և անգոսնեաց, և համարձակեցաւ առ թագաւորն դիմել և ձանձրացուցանել, զայսպիսիսս մի արժանի առնել թողութեան կամ ընդունելութեան, և կամ բնաւ յոյս ինչ տալ, զի առ յասլայ հաստատեացէ ի նոյն տեղի:

Ժե յթ Թէ ոք յեպիսկոպոսաց յիրս ինչ մեղադրիցի յանցանս, և չարխօսեսցի և դատապարտեսցի յամենեցունց, որ իշխանութեան հպիսկոպոսքն են, և ամեն միաբանութեամբ՝ զմի և զնոյն վճիռ հանեն ի վերայ նորա և յայտնիցեն, այսպիսին մի իշխեսցէ՝ այլում դատ խօսել, կամ իրաւ ոք իշխեսցէ առնել այնպիսոյն, այլ կացցէ և հաստատեսցի միաբանութիւն ամենեկին, որ եղև յայսմ իշխանութենէ՝ զոր հպիսկոպոսքն կարգեցին:

Լաւորելի Զէ արժան՝ որ ի քահանայից աստիճանի են՝ յերիւթ հօգ ցուէ մինչև ցդպիրսն, առ կրպակս մտանել և շուայիլ կամ ի վաճառի՝ ի խոհակերոց մտանել և ճաշակել:

Լզ նիե Ոչ է մարթ քահանայից և ուխտաւորաց, մոգս, և թովիչս, և դիւթս, և վճուկս լինել կամ առնել, կամ հմայեալս և պահպանս, որք ճշմարտութեամբ չեն պահպանք, այլ կապանք հոգւոց նոցին, և որ յայսպիսի ինչ գացին յանձին ունիլ, արտաքս քան զեկեղեցի ընկեսցին:

Թադ. առաք. Ժա նհգ Դարձեալ ասէ առաքեալն՝ իսկ եթէ ձեռնադրեսցէ զոք հպիսկոպոսն, և մարդն ուղիղ էր, ապա շնացաւ, կամ գողացաւ, կամ այլ ինչ վատթար գործեաց, այնպիսին ամենեկին բարձցի ի քահանայական շնորհէն, և ձևն, և նշանն, քանզի անհնար է նմա՝ այլ քահանայանալ, այլ արտաքոյ սպաշխարել, Ժն. ամ, ապա յայնժամ եկեղեցւոյ արժանանայ, և հա-

զորդութեան սուրբ պատարագին, ընդ այլ զինուորսն կացցէ յեկեղեցւոյ, և անհնար լիցի նմա՝ այլ ի բէմ կլանել, կամ կարդալ, կամ սաղմոս ասել՝ մինչև յօր մահուան իւրոյ, քանզի պղծեաց նա զսուրբ ամուսնութիւնն և առ ոտն կոխեաց, մի՛ համարձակեցուցցէ եպիսկոպոսն, քանզի չէ հնար նմա, այլ քահանայ լինել:

Ս. Գրեգ.

լուս.

իբ շիթ

Եթէ որ ի քահանայից՝ զծածուկ խոստովանութիւն ուրուք յայտնեաց, անկցի յաստիճանէն, և ի կարգէ պաշտօնէից մերժեսցի, և մեղք չխոստովանողին՝ անկցի ի վերայ նորա:

Բարսղի

խր

Եթէ որ յածի աւելորդ քան զհարկաւոր պէտսն՝ խր ոհր չըջնով վայրապար, որոշեսցի այնպիսին, զի դադարեսցին ուրք նորա ի տան, որպէս և գրեալ է:

Բարսղ. Բ.

ճծա

Քահանայ, կամ սարկաւադ, կամ ուխտական ճծա պիէ եկեղեցւոյ, թէ պոռնկի յախտ ցանկութեան ստանայի, լաւ է միանգամ պոռնկիլ, և ապաշխարել, քան ամուսնանալ՝ և յարակայ պոռնկիլ երեք-կին կամ չորեք-կին, յար ի պոռնկութեան են. վի լաւ էր նոցա պոռնկիլ, և ի կարգ դալ ապաշխարութեամբ, քան պղծել զեկեղեցի Աստուծոյ և զարդարութեան պսակն:

Վարդ.

շայոց

ի Շհ.

թթ ռճծէ

Եթէ որ ի մծղնէութեան գտցի, կամ երեց, կամ սարկաւադ, կամ յարեղայից, ի քահանայութենէ լուծցի. աղուեսադրոյմ ի ճակատն դիցի, և ի տեղիս ճգնաւորաց՝ յապաշխարութիւն տացեն. ապա եթէ՝ դարձեալ ի նմին գտցի՝ զջիւսն զերկուսեան կըտրեսցեն, և ի գողենոց տացեն, զի մարդ ի պատուի էր և ոչ իմացաւ, նոյն պատուհաս և արեղային: Ապա եթէ՝ արք կանամբք և որդուվք գտցին յաղանդին, զարանց և զկանանց և զիրագէտ մանկանցն զջիւսն կտրեսցեն, աղուեսադրոյմ ի ճակատն դիցեն և ի գողենոց տացեն յապաշխարութիւն, և մանկունք՝ որ չև իցեն դիտացեալ զլըղծութիւն, կալցեն և տացեն ի ձեռս սուրբ պաշտօնէիցն Աստուծոյ, որ սնուսցեն և ուսուսցեն զնոսա ի հաւատս ճյմարիտս և յերկիւղ տեառն:

Յովհան.

իմաստ.

ա ռճծէ

Եպիսկոպոս կամ քահանայ, կամ սարկաւադ, կամ ուլ և իցէ յուխտէ եկեղեցւոյն, յարեցութեան գտեալ, մի՛ իշխեսցէ պաշտել զկարգն, մինչև աւուրս ընդ մէջ արարեալ սրբեսցէ զինքն ապաշխարութեամբ, պահօք և աղօթիւք, և ապա համարձակես-

ցի մատչելի ի կարգ իւր, և ի հաղորդութիւն, իսկ եթէ յամառեալ ի նմին որկորոտութեան յամեացէ, լուծցի:

Եփրեմ.
կրօն.

ա ռմիս

Քահանայ, կամ կրօնաւոր, կամ սարկաւազ, որ կամակոր մտօք ինքեան ընկենուն զպատիւն կամ զբէմն վասն ծանրութեան կամ ծուլութեան, կամ ամբարտաւանութեան, կամ հակառակութեան, կամ ամուսնութեան, արտաքս ընկեացի յեկեղեցւոյ և ի ժողովրդոց, և ի կենդանի խորհրդոյն. քանզի հաւասար է նա այնոցիկ՝ որ զորդին Աստուծոյ առ. ոտն հարին, և զարին նորոյ ուխտին խառնակ համարեցան, և զչնորհաց հոգին թշնամանեցին, ապա եթէ՝ ապաշխարեալ դարձցին. յետ է, ամի ապաշխարութեան՝ արժանացին եկեղեցւոյ ի հաղորդութիւնն, իսկ զպատիւն և զսքէմն՝ ըստ կամաց եպիսկոպոսին առցեն:

Անտ. Բ.

դ ռմծա

Կամ եղև մեծ և սուրբ ժողովոյն, թէ՛ երեց, կամ սարկաւազ, կամ սով և իցէ յուխտէ մանկանց՝ քրիստոնեայ անուն ի վերայ. մի ուղղել ընդ կանայս, և մի ի բաղանիս մտանել:

ե ռմծբ

Կամ եղև մեծ և սուրբ ժողովոյն, թէ՛ քահանայ իցէ՝ ամենեին իսկ յուխտէ մանկանց, երթալ ի հարսանիս, ոչ կաքաւել, և ոչ ի պարու գալ, այլ պարկեշտութեամբ ընթրիս ուտել, որպէս և վայել է քրիստոնէի:

զ ռմծգ

Կամ եղև մեծ և սուրբ ժողովոյն, թէ՛ քահանայ իցէ՝ կամ բնաւ յուխտէ մանկանց, մի տեսանել զխաղ ի հրապարակս, և մի զձայն երգոց և փողոց՝ թողեալ զերգս հրեշտակաց, և զերեսցես զմիտս քո ի նոսա, և մի գուսանամուտ առնել քահանայից զտուն իւր, թողեալ զերգս Աստուծոյ, քանզի ոչ կարեն ի միասին բնակիլ:

Դուռնոյ

ս. ժող.

զ ռմկզ

Ոմանք յուխտէ եկեղեցւոյն՝ զկարգ և զպաշտօն թողին, և հեծելութիւն ստացան: Սրդ՝ եթէ դառնան ի չար ճանապարհէն, օրհնեալք են ի տեսանէ. և ընկալեալք ի մէնջ, ապա եթէ ոչ՝ իշխանութիւն լիցի վարդապետին՝ զչնորհս եկեղեցւոյ հանել յայնպիսեացն, և, արժանաւոր քահանայից և պաշտօնէից և մերձաւորաց տալ. որք զսրբոյ եկեղեցւոյ զգուշութեամբ զկարգն կատարեն, այլ և ժամ դիցեն այնպիսեացն Գ. ամ, եթէ չդառնան ի ծանրութեան ճանապարհէն, իշխանութիւն լիցի ե-

պիսկոպոսին, զայնպիսին գրով և կնքով իսկ՝ մեր-
ժեկ ի շնորհացն, և տալ մերձաւորաց նոցա:

Ներս.
Շնոր.

բ ոյկդ

Իսկ վիրաւորեալքն ի պոռնկութեան դիւէն,
հոսամար ախտից գիջական և մեղկական խորհրդով
լլկեն զմարմինն և հոսեցուցանեն զարիւնն, մի՛ ե-
կեսցեն ի կարգ քահանայութեան, և թէ ի կարգին
են, լռեսցեն ի սպասաւորութենէ:

դ ոյկդ

Քահանայն՝ զամենայն կարգեալ աղօթսն ան-
խափան կւտարեսցէ զեօթն ժամուցն, և մի՛
զմարմնական գործով զբաղեսցի, և մի՛ նզովս հանցէ
կամ ինչ աղտեղի, և մի՛ ծիծաղեսցի, մանաւանդ
յաւուր՝ յորում պատարագ մատուցէ, և զկնի ժա-
մուն՝ մի՛ արտաքս թքցէ. և մի՛ զձեռս յանարժան
տիղտջ լուսացէ, և մի՛ ննջեսցէ անհոգութեամբ և
մի՛ ազահեսցէ ի կերակուր:

ժա ոյհբ

Որ ժամ առնէ և արեհնայ և փսխէ, նոյնպէս
և որ հաղորդի և փսխէ, Զ ամիս, պահօք և աղօ-
թիւք արտաքոյ ապաշխարեսցէ, իսկ որ արտաքս
ցայտեաց, ի զգուշաւոր տեղւոյ ծածկել, և ոչ այ-
րել տգիտութեամբ, և թէ զնոյն կրկնէ, Գ ամ, ա-
պաշխարեսցէ. Բ, արտաքոյ, և Ա, ի ներքս, և թէ՛
երեքկնէ, այլ մի ի սուրբ խորհուրդն մերձեսցի,
իսկ եթէ արեհցաւ միայն յայնմ աւուր, Ի. օր, ար-
տաքոյ ապաշխարեսցէ, ապա թէ՛ յայլ աւուրսն
արեհնայ, Ը օր, աղօթս մի՛ ասացէ, և մի՛ աւե-
տարան կարդասցէ, և թէ ի նոյն որկորոտութեան
յամէ, լուծցի:

ժէ ոյհբ

Նթէ օթեակ նշխարով մատոյց յանգէտս, Խ. օր,
իսկ գիտելով՝ Բ. ամս, բայց վարդապետն հայեսցի
ի ջանն, և մարդասիրեսցէ կարճելով:

ԺԵ

ՅԱՂԱԳՍ ԶԱՐՀԱՄԱՐՀԵԼՈՅ ԶԵԿԵՂԵՑԱԿԱՆՍ ԵՒ ԶԱՐԳԵԼԼՈՅ
ԶՀԱՍՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԸՍՑ ՍԱՀՄԱՆԵԼՈՅ ՀԱՐՑ ՍՐԲՈՑ

Առաք.

իե իե

Կարգեցին առաքեալք՝ և եղին հաստատու
թեամբ, թէ մի՛ ոք անարգեսցէ և անգոսնեսցէ, և
արհամարհանօք կալցի զքահանայն, թէ և կարի ոք
անարժան և յանարգաց ոք իցէ, զիտացէ, զի զԱս-
տուած անարգէ, զի Աստուծոյ սպասաւորէ՝ ձեզ ի

բարիս, և համարս տալոց է ընդ հոգւոց ձերոց, զի գրեալ է՝ զիշխան ժողովրդեան քո՝ մի բամբասեսցես:

Առաք.
ի ձեռն
կղէմ.

Դ ԼԲ

Բայց այլ ամենայն միրգք ի տունս առաքեսցին եպիսկոպոսին, և երիցանցն, այլ ի սեղանն մի մատիցեն, յայտ է՝ զի եպիսկոպոսն և երիցունք բաժանեսցեն սարկաւազաց և այլոց ժառանգաւորաց:

Բարս. Բ.

Եթէ ոք յուխտէ եկեղեցւոյ, անգոսնեսցէ ըզհդ չլսթ քահանայ, որ կանամբի իցէ, և գարշի ի նմանէ, նզովեալ եղիցի:

Ճխբ պժը

Թէ ոք արգելցէ զսլտուղ քահանայի, կամ զերի, կամ զմորթի, կամ զայլ հասս սուրբ եկեղեցւոյ, զոր սուրբ Հայրապետացն կարգեալ է՝ ազգմամբ սուրբ Հոգւոյն, եղիցի ընդ խաչահանունսն Քրիստոսի:

Միտ պղէ

Թէ ոք յիշխանաց զքահանայն անարգէ վասն պոռնկաց, կամ այլ չար գործոց, որպէս թէ՝ օգնակոն լինել նոցա, և զարգար դատաստանն թիւրէ, որպէս և գիրն ասէ, իշխանք ձեր՝ գողակիցք են գողոց, նզովեալ եղիցի ի Քրիստոսէ, և չարիք նոցա ի դուռն նոցա եղիցին:

Միբ ունծղ

Եթէ քահանայ ոք՝ զհաս քահանայի ուրուք ուտէ լուկեայն՝ կամ յայտնի, կամ զայլոյ աղ օրհնէ, կամ պսակէ, կամ կնունք, կամ թաղումն, և զայլ այսպիսիս առանց հրամանի քահանային, նզովեալ եղիցի ի կեանս և ի մահ, և կարգաւորեալքն անվնաս են:

Բ. ժող.

Ստոյ
իւս իւս

Ժողովրդսկանք՝ աղաչանօք և յօժարութեամբ տացեն զհասս քահանայիցն՝ յամենայն արմտեաց՝ պտուղս, և զկարգեալ բաժին մատաղին, և պսակին, ընծայիւք և թաղմանն հանդերձ և ժամու դրամ, ոչ գին պատարագին, այլ երիցուն հանդերձ և կերակուր, որ աղօթից և պատարագի պարապէ և եկեղեցւոյն:

ԺԶ

ՅԱՂԱԳՍ ԴԱՏԱԻՈՐԱՑ

Առաք.

Կարգեցին առաքեալք՝ և եղին հաստատուիլ իզ իզ թեամբ, թէ՝ որք են յաստիճանի դատաւորութեան,

և իշխեն առնել զդատաստանս, եթէ թիւրեացէ, և եթէ՝ աչառիցէ երեսաց, և պարտաւորեացեն զարդարն, և արդարացուցէ զպարտաւորն, մի ևս կացցեն ի կարգ դատաւորութեանն, և պատուհասեալ կշտամբեսցին, զի ոչ իմացան զգրեալսն աստուածային ձեռամբ յօրէնսն Մովսիսի, թէ՛ խոտորեցուցես զիրաւունս դատաստանի, և կաշառ ի վերայ իրաւանց մի առնուցուս:

ԺԷ

ՅԱՂԱԳՍ ԿՈՒՍԱԿՐՕՆԻՑ ԵՒ ՈՒՒՏԱԿԱՆԱՑ

Առաջ.

ԻԲ ԻԲ

Կարգեցին առաքեալք՝ և եղին հաստատութեամբ, եթէ ոք ի կարգէ պաշտօնէից, և յուխտէ եկեղեցոյ՝ կամիցի կուսան լինել, բարւոյ դործոյ ցանկայ, համարձակ լիցի վանս շինելոյ ի տեղիս տեղիս, ժողովեալ օրինաց և կարգի սրբութեան, զգուշասցի ի կերակրոյ պարկեշտանալ, և ի զինուորական զգեստուէ հեռանալ, պնդեալորեալ նմանեսցի պաշտօնէից հրեշտակաց Աստուծոյ, և զուարթնոց երկնից: Զի և Յեսու պաշտօնեայն Մովսիսի, և սպասաւոր սրբութեանն, և Նղիա նախան. ձաւորն Աստուծոյ, և Նրեմիա մարգարէ, և մարգարէն՝ Մկրտիչն Յովհաննէս, սոքա ամենեքեան կուսութեամբ և պարկեշտութեամբ կատարեցին զկեանս իւրեանց, բռնութեամբ կալեալ յափշտակեցին զարքայութիւնն երկնից:

Հարց

Հեա.

առաջ.

ԺԳ ճԼԵ

Որոյ մոնսղութիւն խոստացեալ է կամօք և ոչ ի հարկէ, և խնդրէ ամուսնանալ՝ իբրեւ զուրացողն և դարձ ոչ է ի կարգ քահանայութեան, ի դատաստան անձին մի խաբեսցի:

Անկեւր.

ԺԵ յԵ

Ոչք յուխտէ անտի իցեն՝ երիցունք, կամ սարկաւազունք, կամ ոք ի պաշտօնէից, և հռի իցեն ի մսոյ, և միտք իւրեանց յօժարիցեն ի ճաշակել, համարձակ կերիցեն, և մի գաղտարար, ապա եթէ՝ կամք իցեն՝ պահիցեն, ընդունին կանոնք զերկոսին, ապա թէ՛ ոք պիղծ համարիցի՝ կամ զբանջար կամ զհաց, որ մսոտ իցէ, ոչ ընդունին զնա կարգք եկեղեցոյ:

Ի յԺ

Վասն այնոցիկ՝ ոչք ի չափ հասակի հասեալ

իցեն, և կուսութիւն խոստանայցեն պահել, և ստե-
ցին խոստմանն, ի շնութիւն անկան, կոյս այնուհե-
տեւ ոչ կարեն լինել, այլ եղիցին սոքա՝ որպէս այն՝
որ երկուս կանայս արարեալ իցեն. զսահման նոցա
ընկալցին, և զապաշխարութիւն, Բ. ամ, ընդ ձե
ռամբ առ դրանն, և Ա. ամ, մտեալ յեկեղեցին՝
ընդ ապաշխարոյս ելցէ. զջերմութիւն ապաշխա-
րութեանն տեսցեն, և հաղորդեսցին օրինաց. բայց
յօծումն քահանայութեան՝ մի մերձեսցին, այլ վասն
կուսանացն՝ որ մերձենային առ ոմանս, իրրեւ
քեռք, զայնպիսիսն խափանեցաք. զի մի եւս իցին:

Լաւող. Զէ մարթ քահանայի և ուխտաւորաց՝ առանց
իս նիթ հրամանի եպիսկոպոսին ի ճանապարհ ուրեք եր-
թալ:

Ժա նիս Զէ մարթ քրիստոնէից և ուխտաւորաց՝ խաղս
ինչ տեսանել, կամ երգս ի հարսանիս, կամ յընթ-
րիս, այլ մինչչեւ մտեալ վարձակաց և կատակաց.
այլ ցած ուտել, և գնալ ի տունս իւրեանց:

Գրեգ. Որ զկուսութիւն իւր Աստուծոյ նուիրեաց և
լուս. ապա ապականեցաւ, եօթն ամ ապաշխարեսցէ:

Ժգ չի

իթ յծ

Կոյս՝ որ նուիրէ զանձն իւր Աստուծոյ, նոյն-
պէս և մոնղոն, մի իշխեսցէ ամուսնանալ ապա
եթէ գտցի, ի հաղորդութենէն անկեալ հեռացի, և
եպիսկոպոսն տեսցէ զվարսն, և որպէս կամի, մար-
դասիրեսցէ:

Բաբաղ.

Ժ ոլդ

Կուսանաց՝ որոց միանգամ խոստացեալ իցէ
զվարս իւրեանց Քրիստոսի նուիրել, և զգաստու-
թեամբ և համեստութեամբ գնալ, ապա դարձեալ
անկանիցին ի մարմնաւոր ախտս, և անարգեսցեն
զդաշինսն, զոր եղին առ Աստուած, և արդ՝ եթէ
այրութիւն նուազ գտանի քան զկուսութիւնն, ա-
պա յայտ է թէ՝ և մեղանչել կուսին՝ առաւել չար
է, քան զայրոյն. և արդ՝ տեսցուք այժմ զգրեալսն
ի Տիմոթիա ի Պողոսէ. զոր ասէրն՝ թէ ի մանկա-
մարդաց այրեացն հրաժարեաց. զի յորժամ խայտան
զՔրիստոսիւ, ամուսնանալ կամին. Իսկ զդատաս-
տանն ընկալցին, զի զառաջին հաւատսն արհա-
մարհեցին, իսկ եթէ՝ այրին ընդ այնպիսի ծանր
տանջանօք է, որպէս է՝ որ ի Քրիստոս հաւատս
ունին՝ անարգեն, և զլինչ կարեմք մեք զմտաւ ա-
ծել յաղագս կուսին յանցանաց, որ նոյն ինքն

հարսն Քրիստոսի, և սպաս ընտիր, և նուէր Աստուծոյ կոչեցեալ, ապա յայտ է թէ՛ այրին որպէս զաղախին ապականեալ դատապարտի. իսկ կոյսն՝ ընդ դատաստանօք շնացելոցն անկեալ կայ:

ժա ոլե իսկ հաւատաւորացն պոռնկութիւն, մի ոք համարեացի յամուսնութիւն, այլ մանաւանդ յափտակել զնոսա յայնպիսի չոչափմանէ: Քանզի այսոքիկ իմաստք եկեղեցւոյ՝ օգտութեան զգուշութիւն գործեն, և զմէնջ՝ հերձուածողաց բռնահարութիւն ոչ գտանել:

իթ ոծդ Որ զկուսութիւն խոստացեալ է պահել, և անկցի ի խոստմանէն, և շնայցէ ընդ ումեք, նոյնպէս և որ զմոնոզութիւն խոստացեալ է պահել, և անկցի ի շնութիւն, զամենայն ժամանակս կենաց իւրեանց ապաշխարեցնեն:

Բարսղ. Բ. Նթէ ոք կուսութիւն խոստանայ պահել՝ և զ ոձա պոռնկի, զամենայն աւուրս կենաց իւրոց ընդ ձեռամբ կացցէ:

Լ չե Ուխտաւոր մի ի ճանապարհ ունիցի զմարմնաւոր կանայս, վասն սիրոյ, և մի տեսցէ զպսակեալս, և մի ինքն դիցէ պսակ, կամ առնիցէ մըկըրտութիւն, կամ օրէնս տալ կանանց, այլ ի մասնել արեգականն, երթալ ի անդիս իւրեանց, և եթէ յանդգնին, նզովեալ եղիցին ի Քրիստոսէ:

ԼԴ չԸ Որ մոնոզութիւն խոստանայ, և կին առնէ, ուրացող է, նոյնպէս և քահանայ:

ԼԵ չԼԴ Ջմոնոզոնաց զարանց ոչ լուաք, բայց միայն այնոցիկ՝ որ իւրեանց կամաւ ետուն զանձինս ի կարգ մոնոզութեան, որք ի ձեռն լուութեան՝ համարեցան հրաժարիլ յամուսնութենէ. սակայն և ի նոսա պարտ է յառաջագոյն եկելոց ի կարգս նայեցեալ, և քննել զայժմու եկեալքս, և առնուլ ի նոցանէ խոստովանութիւն՝ չլինել մարմնասէր, և ոչ յանդուգն վարս վարել, իսկ ապա թէ՛ վրիպումն ինչ լինիցի ումեք անկանիլ յարատ պոռնկութեան, արժան է զայնպիսին խրատել, ի կարգ ուղղութեան ածել. զի այր՝ որ ընդ կնոջ միաւորեալ բնակի, և ոչ շատացի իւրով ամուսնաւն, և անկանի ի պոռնկութիւն, զայնպիսին ընդ պոռնկին համարել: և առաւել յաճախեցուք ի վերայ նորա զպատուհասն. քանզի և կանոնք զայս ուսուցանեն:

- ԱԹ չԺդ Վասն այնոցիկ՝ որք զանձինս իւրեանց նուրի-
րեցին Աստուծոյ, և շնան և կին առնեն, և արանց
լինին է. ամ, ապաշխարեսցեն, և բազում տրօք
աղքատաց՝ արժանի լիցին օրինաց:
- ՀԵ չԺբ Թէ ուխտաւոր եկեղեցւոյ, կամ քահանայ ի
պղծութեան անասնոյ գտցի, մերժեսցին ի կարգէն
իւրեանց, եւ մինչեւ ի վախճան ընդ ունկնդիրս
կացցեն, և եթէ արտի մտօք դարձցին հեծեծանօք,
արժանի լիցին օրինաց:
- ՃԸ պխզ Այլ կամ կին ուխտական, կամ շնորհաց տէր,
մի իշխեսցէ ի բէմ ելանել, կամ սպաս ունել, կամ
ճրագ լուցանել, և եթէ համարձակի ոք. նդովեալ
եղիցի:
- ՃՀգ պխթ Թէ ոք ուխտական, կամ դպիր, ժողովրդեանն
առաջնորդէ, և հրապարակաւ աղօթէ, կամ շնորհս
առնու յինքն, կամ պտուղ, կամ ապաշխարութիւն
դնէ մեղաւորաց, կամ վասն տգիտութեան զքահա-
նայն արամարհէ, եղիցի ընդ խաչահանունսն Քրիս-
տոսի:
- Գրեգ. Որք կուսանալ խոտացան Աստուծոյ, և պոռ-
նրկեսցան, Զ ամ. արտաքոյ մնացեն. Բ. ի ներքս
Աստուծ. Ի ԶԿէ ընդ լսողսն, ոչ հաղորդեալ՝ ապա առցէ զձև կու-
սանի՝ և հաղորդեսցի:
- Սահակ. Հարց.— Եթէ պարտ է ուրկի եւ բորոտի սքէմ
մերջն. կրօնաւորութեան, և յանապատի բնակիլ
եւ ոճհգ առաքինութեան աղագաւ:
- Պատաս.— Զէ պարտ՝ այլ ի հիւանդանոցս ընդ
ընկերս հաւասարիլ:
- Սիօնի կթղի. Կրօնաւոր՝ ուր առեալ է զկրօնս սրբութեան,
Ժե ում և տեղափոխ լինի յուխտէ յուխտ, արգելեալ լիցի,
և մի ոք իշխեսցէ զայնպիսին ընդունել. այլ ճւր
ընծայեցաւ Քրիստոսի, ի նմին տեղւոջ կատարես-
ցէ զառաքինութեան իւրոյ զհանդէս՝ և կատարես-
ցի. բայց եթէ յառաջնորդաց կոչեսցի յառաջ՝ յա-
ռաջնորդութիւն եկեղեցւոյ, և կամ վարդապետու-
թիւն ունիցի ի լրումն աստուածեղէն ուսման:
- Սևանդ. Հաւատաւոր՝ թէ գայթակղեսցի, խորգով և
Եպսկ. սգով մտցէ յապաշխարութիւն, վեց ամ, արտաքոյ
Ժգ ոյԺդ դրան, և երեք ամ, ընդ ապաշխարողս, և օրէնս
մի առցէ:

Ներս. Ոչ է՛ պարտ կուսան կրօնաւորի, կանանց
շնորհ. խոստովանութիւն առնել. բայց եթէ՛ երկիրդ մա-
ծիէ՛ ռնձը հու իցէ, և այլ երես մերձ ոչ լինի:

Ասոյ Վեցերորդ՝ կրօնաւորաց միս ոչ ուտել, միա-
ժող. բան կալ ի վանսն, և առանձին իրս ոչ ստանալ:
զ զ

ԺԸ

ՅԱՂԱԳՍ ԽՈՐՀՐԴՈՅ ՊՍԱԿԻ ԿԱՄ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Ասաք. Կարգեցին առաքեալք և եղին հաստատու-
լդ լդ թեամբ, եթէ իսկզբանէ՛ զուգեաց ամուսնութեամբ
զմարդն, և օգնական արար միմեանց՝ և օրհնեաց
զնոսա. նոյնպէս սահմանեալ և հաստատեալ առա-
քելական հրաման, սրբութեամբ զուգիլ յամուսնու-
թիւն՝ և օրինօք ի ձեռն աջոյ քահանայութեան՝ և
օրհնութեամբ զուգեացին. բայց որպէս Մովսիսի
պատուիրէր արարիչն Աստուած, թէ՛ պատուիրեմ
որդուոցն իսրայէլի, ես եմ տէր աստուած ձեր, զգու-
շացարուք պատուիրանաց իմոց, և մի՛ գնայցէք
ըստ կրօնիցն եգիպտացւոց, ուստի ելէքն. և ըստ
գնացից Գանանացւոց մի՛ գործէք:—Սև ասէ՛ մարդ
ոք՝ մարդ, առ ամենայն ընտանութիւն մարմնոյ
իւրոյ մի՛ մերձեցի, յայտնել զառականս մերձաւո-
րի արեան իւրոյ. զառականս դստեր քո մի՛ յայտ-
նեցես, զառականս քեռ քո՝ թէ առ ի հօրէ իցէ,
կամ ի մօրէ, մի՛ յայտնեցես. զառականս կնոջ հօր
քոյ՝ մի՛ յայտնեցես, զառականս հօրաքեռ քոյ մի՛
յայտնեցես. զառականս քեռորդւոյ քոյ մի՛ յայտ-
նեցես, պղծելով ընդ նոսա:—Սոյնպէս և յերկրոր-
դում կարգեաց օրէնսդիրն Մովսէս, եւ ասէ՛ անի
ծեալ լիցի՝ որ ննջիցէ ընդ կնոջ հօր իւրոյ, զի
յայտնեաց զաներեւոյթսն հօր իւրոյ, անիծեալ լիցի՝
որ ննջիցէ ընդ քեռն իւրում, որ առ ի հօրէ իցէ
կամ առ ի մօրէ եւ ասացէ ամենայն ժողովուրդն
եղիցի, եղիցի: Նոյնպէս եւ սահմանեալ առաքելա-
կան կանոնաց, մարդ ոք՝ մարդ, առ ամենայն ըն-
տանութիւն մարմնոյ իւրոյ մի՛ մերձեցի՝ կամ շնու-
թեամբ, կամ ամուսնութեամբ, մինչեւ ի չորրորդ
զարմն չունի իշխանութիւն առնուլ:

- Աւաք. Նիթէ որ զկոյս բռնաբարեալ կալցի, որոշեսցի.
ի ձեռն եւ մի լիցի նմա արժան այլ առնուլ, այլ զնոյն
կր 79 իսկ՝ ընդ որ հաճեցաւն, թէպէտ եւ ի տառապելոց
որ իցէ:
- Հալց հե- Որ զհետ միմեանց մեռանին մինչեւ ցերրորդն,
տեւողաց թէ վասն որդեծնութեան, կամ վասն տնարարու-
աւքւց. թիւ 814 թեան իցէ՝ ընկալցի սուրբ եկեղեցի յապաշխարու-
թիւն, ապա թէ՝ որդիք դուցեն՝ եւ տնտես կայցէ,
մերժեսցի որպէս ամենաշար պոռնիկ:
- Ժե 814 Ձառեւանդն՝ եթէ որդիս ծնցի, եւ հայր եւ
մայր եւ աղջիկն չկամիցի, մի ինչ վնաս կրեսցէ ի
չար գաղան ոգւոյն՝ անդրէն դարձուցանել:
- Նիկ. Բ. Պարտ է գերկրորդ ամուսնացեալսն՝ յետ ե-
թ 856 ըից ամաց՝ շնորհին արժանի առնել:
- Իգ 868 Ձխօսեալ աղջկունսն, եւ յայլոց յափշտակեալս,
պարտ է յառաջին խօսեցելոյն ի բաց տալ, թէ-
պէտեւ բռնադքօսեցան:
- Իգ 878 Կին եթէ ամուսնացի երկուց եղբարց, մին-
չեւ ի վախճան որոշեսցի:
- Ճէ 884 Ոչ է պարտ ի քառասնորդսն, կամ յաւուրս
Պենտէկոստէից, կամ ի կիւրակէսն ամենայն, հար
սանիս կատարել:
- Սեկիւր. Եւ որ միանգամ խօսեալ աղջկունք, եւ զու-
թի 90 գեալ գտանիցին, եւ յետ այնորիկ՝ այլք յափշտա-
կեցին. կամ եղեւ զի անդրէն տայցեն՝ որում խօ-
սեալն էր, եւ եթէ ի բռնութիւն ապաստանիցէ,
մի թողցեն:
- Ղաւոր. Ձի չէ մարթ՝ ըստ եկեղեցւոյ կանոնաց. ոչք
ա 91 ազատութեամբ եւ օրինօք բնակեցան ի միասին, և
զերկրորդ հարսանիսն մի գաղտ արացեն, բայց
իբրեւ փոքր ինչ ժամանակ անցեալ իցէ եւ պատ-
րաստիցեն աղօթից եւ պահոց, ապա թողացուցա-
նել նոցա եւ համարձակիլ սահմանեցաք:
- Խթ նը Ոչ է արժան ի քառասներորդսն հարսանիս
առնել, կամ ի ծնունդս ուրուք տօնս առնել:
- Ննոյ կե- Որ ի պէս պէս ամուսնութիւն ինչ ըմբռնին,
սարեոյ ժամանակն յայտնապէս է, զոր սահմանեցաք, այլ
գ 914 դարձ նոցա եւ հաւատք, թէ փութութեամբ ինչ
իցէ՝ կարճել զժամանակն:

ե պէճե Ոյլ վասն չորրորդին եւ հինգերորդին, որ ունին կանայս, օրէնք չին դատաւոր, եւ եկեղեցի ոչ ընդունի, բայց եսկոկոպոսն գիտասցէ:

Քաղ. Զարց.—Որ մի մօր կաթամբք սնեալ են՝ օ առաք. տարք ի միմեանց, արժան է ամուսնանալ:

Լա նղղ Պատաս.—Ձէ արժան, զի ծնող եւ սնող մի համարի են:

Լբ նղէ Զարց.—Եթէ ազգականք ամուսնանան, զինչ արասցուք:

Պատաս.—Բակել արժան է ի միմեանց եւ ծանր ապաշխարութիւն զնել ի վերայ, զի չէ ամուսնութիւն, այլ յարակայ պոռնկութիւն, եւ ընդ ա նիծիւք արարչին:

Փիլիպ. Կին թէ յամուլ դիպեսցի՝ անգիտաբար ամուսնանալով, անմեղք են, մի օրոշեսցին ի միմեանց.

Բ 2 իսկ զոր յայլոց արանց փորձեալ իցեն, եւ յետոյ այլք առնուցուն, զկանայս սնալտուղս, նոքա են ըստ նմանութեան քաղից հա խողից, որք զվայրենանալն միայն կամիցին, պարտապան եղեալ աս տուծոյ. նոքա դարուադիտաց զգատաստան ընկալցին, եօթն ամ, արտաքոյ եկեղեցւոյ ապաշխարեսցեն, եւ տասն ամ՝ յեկեղեցի մտցէ եւ ելցէ ընդ ապաշխարողս, եւ ապա հաղորդեսցի օրինաց:

Գրեգ. Թէ ոք առեւանգ արասցէ, պսակն անվաւեր լիցի, եւ պսակեալն՝ ում կամիցի լիցի:

Աթան. Զարց.—Որք զուգաւորին յամուսնութիւն միաւորութեան, յաւուր շարաթու եւ կիրակէի, հրաժարել պարտ է ի միաբանութենէ, եւ յորս արժան է ունիլ իշխանութիւն մերձենալոյ:

Պատաս.—Որպէս յառաջն ասացի, եւ այժմ ասեմ, առաքեալն ասաց, մի՛ զրկէք զմիմեանս, բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամանակ մի. զի ուխտիցն պարապիցէք, եւ դարձեալ ի նոյն դարձջիւք. զի մի՛ փորձեսցէ զձեզ սատանայ՝ վասն անխառնութեան ձերոյ. բայց զշարաթ եւ զկիրակէ պարտ է հեռանալ յամուսնոյ. զի ի նոսա հոգեւոր պատարագ մատչի տատուծոյ:

Իա շծբ Զարց.—Եթէ այր ոք՝ ոչ լինիցի ի գործ այրութեան, եւ կինն երանէ ի նմանէ, թէ ոք զկինն զայն կին առնիցէ, ընդ հանեալ կանայսն պարագէ համարել զայնպիսին, եթէ անխիղճ ունել, կամ ե-

Թէ այրն չարձակէ զկինն ի բաց, եւ ասացէ այսպէս՝ Թէ ինձ մասն հասեալ յաստուծոյ, կաց եւ պաշտեա զիս միջ զինչ պատասխան արասցուր:

Պատաս.—Ձէ արժան արձակել, եւ ոչ ձեզ թողացուանել նմա:

Իդ չկ

Հարց.—Թէ կին ուրուք հաշմեսցի, եւ ասէ ցայր իւր, եթէ ես աւաստիկ չեմ արժանի առնակ նութեան, արա՞ դու քեզ՝ այլ կին, որ քեզ պիտանի է, եւ զառն քո չէն կայցէ, եւ ինձ ամ ըստ ամէ հաց եւ հանդերձ տօւր, եւ ես նստայց առ հկեղեցեաւդ մինչեւ ի վախճան ժամանակի իմոյ, եւ նա առցէ յաւճան՝ առնել զամենայն. ընդ պատուհասիւ ինչ են իրքն, զի այլ կին առնէ, թէ անվնաս:

Պատաս.—Վնասակար է՝ ոչ է իշխանութիւն այլ կին առնել. ցորչափ այն կենդանի է:

ձգ ոժթ

Հարց.—Թէ ոք ի քրիստոնէից լինի մող, եւ կին նորին ի քրիստոնէութեան հառադատուն կայ, խիղճ ինչ իցէ կնոջն ընդ մողի առն կեալ՝ Թէ ոչ, կամ սրբութեան հաւասարիլ՝ համարձակութիւն իցէ թէ ոչ:

Պատաս.—Ի սրբութիւնսն չէ իշխանութիւն մերձենալ, վասն զի նա եւ այլ իւր, մի մարմին են, եղիցին ասէ երկոքեան ի մարմին մի:

Բաբոյղ

Իսկ երրորդ ամուսնութեանն օրէնք ոչ գոն, վասն զի օրինացն չհամարեցաւ ինչ այսպիսի, այլ որպէս արտաքս ինչ յեկեղեցոյ ընկեցեալ տեսանամ.— Եւ դարձեալ հրապարակագոյժ առնել՝ չէ բարւոք. որպէս հաճոյ թուեցաւ ոմանց ասել, թէ լաւ է այս քան զպոռնկութիւն. բայց ոմանք եւ վասն չորրորդ ամուսնութեան, բազում անգամ սահմանեցին անուանելով այնուհետեւ ոչ շնութիւն, այլ բազում ամուսնութիւն. ստեղծաւոր ըստ օրինացն զպոռնկութեան իսկ գտանջանս ընդունել.— Վասնորոյ եւ տէրն իսկ Սամարացոյն ճառեալ ասէր, թէ հինգ այր փոխեալ է քոյ, եւ զոր այժմդ ունիս՝ չէ քոյ այր, եւ այսպիսեացս՝ ոչ եթէ կանոնաւ ինչ դնել ապաշխարութիւն, այլ ըստ կամաց սովորութեան, բայց պարտ է զայնպիսիսն ոչ օտարացուցանել յեկեղեցոյ Աստուծոյ, այլ լոկ արժանաւորք լիցին ի պաշտամանն՝ արտաքոյ եկեղեցոյ, եւ ի հաղորդութենէ հեռի եղիցին, եւ այսպէս ցուց:

